

**ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3 - 18

05.10. 2018թ.

Ք. Երևան

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը սահմանելու մասին» N686-Ն և 2003 թվականի հուլիսի 31-ի՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N957-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին հարցը /զեկուցող՝ Դ.Ստեփանյան/:
2. «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացության տրամադրման հարցը /զեկուցող՝ Դ.Ստեփանյան/:

N/N	Հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն	
1	Թորմաջյան Հովհաննես – հանձնաժողովի նախագահ	ներկա
2	Դադբաշյան Կարեն	բացակա
3	Ստեփանյան Դանիել	ներկա
4	Գաբայան Գրիգոր	ներկա
5	Բաղդասարյան Արթուր	ներկա
6	Հարությունյան Խաչիկ	բացակա
7	Բալջյան Պարզև	ներկա
8	Մարգարյան Ալբերտ	բացակա
9	Մարկոսյան Աշոտ	ներկա
10	Միսակյան Էդգար	բացակա
11	Աղաբաբյան Կամո	ներկա
12	Անդրեասյան Ռուբիկ	ներկա
13	Մինասյան Սեյրան	բացակա
14	Դանիելյան Կարինե	բացակա

Քվորում՝ 8, Ներկաների թիվը՝ 8:

ՀՀ «ՋՐԱՅԻՆ ԿՐՄԻՏԵ»
 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
 ՄԱՌՏԲ No 09/5872-18
 «24» հոկտեմբերի 2018 թ.

Հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը ներկայացրեց նիստի օրակարգը:

Օրակարգի վերաբեյալ հարցեր և առաջարկություններ չեղան:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց հանձնաժողովի անդամ Դ.Ստեփանյանը:

Դ.Ստեփանյանը նշեց, որ մինչ բովանդակային մասին անցնելը որոշման նախագծերով աշխատել է ներկայացնել հայեցակարգային մոտեցումներ, որ իր տեսլականը անհրաժեշտ փոփոխություններն են, սակայն հնարավոր է քննարկման արդյունքում նախագծերը լրացնելու և խմբագրելու անհրաժեշտություն առաջանան: Երկու որոշումների միջև կան անհամապատասխանություններ: Բացի դրանից, կյանքը ցույց է տվել, որ ամրագրված դրույթները փաստացի չեն իրականացվում՝ հաշվի առնելով հենց այդ անհամապատասխանությունները: Դրանից բացի, նշված են պարտավորություններ, որոնք տեխնիկական հանձնաժողովը փաստացի չի կարող իրականացնել: Օրինակ՝ 3 տարին մեկ անգամ տեխնիկական հայտարարագրերը կազմելուց առաջ կատարել բոլոր ՀՏԿ-ների տեխնիկական զննում, տալ եզրակացություն՝ լրացնելով համապատասխան ձևերը: Դա ֆիզիկապես հնարավոր չէ: Ըստ այդմ առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները.

- Անվտանգության հայտարարագրերի կազմման և տեխնիկական զննում կատարելու աշխատանքները երեք տարին մեկ անգամ կատարելու պահանջը հանել որոշումներից, դրանք նախատեսել ըստ անհրաժեշտության:
- Անհրաժեշտ են կատարել խմբագրական շտկումներ: ՀՏԿ-ների անվտանգության հայտարարագրի բովանդակության սահմանման, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգի համաձայն տեխնիկական հանձնաժողովը որոշ դեպքերում կարող է իրականացնել տեսչական ստուգում, սակայն այդ գործառույթը վերապահված է տեսչական մարմիններին, ինչպիսիք են օրինակ՝ ՀՀ ԷԵԲՊ, բնապահպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունների, քաղաքաշինության պետական կոմիտեի և այլ տեսչական մարմինները:
- ՀՏԿ-ների անվտանգության հսկողության և զննման կարգում կան անհամապատասխանություններ ու հնացած դրույթներ, մասնավորապես՝ ՀՏԿ-ների և դրանք օգտագործող ընկերությունների սեփականության ձևի մասին դրույթը թողնելու անհրաժեշտություն չկա:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթ ունեցան հանձնաժողովի նախագահ Հ.Թորմաջյանը, անդամներ Գ.Գաբայանը, Ռ.Անդրեասյանը և Կ.Աղաբաբյանը:

Հանձնաժողովի նախագահ Հ. Թորմաջյանը առաջարկեց որոշ դրույթներ խմբագրել աշխատանքային կարգով և միաժամանակ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

- Անվտանգության հայտարարագրերի կազմման և զննման կարգի մասին թեման յուրահատուկ է և փոփոխություններ կատարելուց առաջ անհրաժեշտ է լսել բոլոր շահագրգիռ կողմերին:
- Կարելի է քննարկել տեսչական մարմնին ջրամբարի վթարային վիճակի մասին ահազանգելու լիազորություն տալու հարցը, սակայն նկատի ունենալով, որ տեսչական մարմիններում չկան համապատասխան մասնագետներ և սպասել նրանց ահազանգին՝ անիմաստ է, քանի որ հարցը կապված է տասնյակ հազարավոր մարդկանց կյանքի հետ:
- Երեք կամ գոնե հինգ տարին մեկ անգամ զննում կատարելու անհրաժեշտությունը առկա է և այն չի կարող հանվել:
- Ինչպես նախկինում, հիմա էլ առաջարկվում է նախատեսել երկրի բարձրագույն պաշտոնիայի անձնական պատասխանատվություն՝ պատվարների անվտանգության ապահովման համար:
- Հայաստանի Հանրապետությունում գործող 17 խոշոր ջրամբարների տեխնիկական զննումը պետք է իրականացվի մասնագիտական կազմակերպությունների կողմից: Ջրամբարների անվտանգության հայտարարագրում գրված պահանջները պարտադիր կատարման ենթակա պետք է լինեն բոլորի համար:

Հանձնաժողովի անդամ Գ.Գաբայանն առաջարկեց զննման աշխատանքները վստահել միայն մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող, լիցենզավորված կազմակերպություններին, ուսումնասիրելով ոլորտի միջազգային փորձը:

Հանձնաժողովի անդամ Ռ.Անդրեասյանը նշեց, որ ՀՏԿ-ների անվտանգության հայտարարագրերի կազմման համար ֆինանսական միջոցներ չտրամադրելու պատճառով տևական ժամանակ ՀՏԿ-ների զննումներ չեն իրականացվել: Ուստի՝ որևէ ժամկետ սահմանելուց առաջ, նախ անհրաժեշտ է իրականացնել ՀՏԿ-ների զննումներ՝ դրանց տեխնիկական վիճակի բազային պատկեր ունենալու համար և ներկայացրեց հետևյալ առաջարկությունները.

«ՀՏԿ-ների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին»

08.05.2003թ թիվ 686-Ն որոշման մասով.

Կարգի 1. Ընդհանուր դրույթներ գլխի 3-րդ կետը վերաձևակերպել հետևյալ խմբագրմամբ.

«3. Սույն կարգը տարածվում է պետական նշանակության ջրային համակարգերի, ՀՏԿ-ների վրա, որոնք իրենց բնութագրերով համապատասխանում են ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշներին, անկախ դրանց սեփականության ձևերից»:

Կարգի Կարգի 1. Ընդհանուր դրույթներ գլխի 4-րդ կետը ձևակերպել հետևյալ խմբագրմամբ.

«4. ՀՏԿ-ի տեխնիկական վիճակի զննումը կարող է լինել պլանային, արտապլանային և ըստ անհրաժեշտության՝ սեյսմիկ և այլ բնական ու տեխնածին ազդեցություններից հետո, ինչպես նաև տարածքային համապատասխան տեսչական ծառայությունների, մարմինների հիմնավորված ահազանգի դեպքում»:

Կարգի Կարգի 2 գլխի «Տեխնիկական հանձնաժողովի կազմավորումը և գործառույթները» բաժնի 5-րդ կետի «բ» ենթակետի մեջ՝ «... արդյունավետ շահագործման ու պահպանության ծրագրերի ուսումնասիրություն...» արտահայտության մեջ «ծրագրերի» բառից հետո ավելացնել՝ «ծրագրերի, նախագծերով առաջարկվող լուծումների ուսումնասիրություն» բառերը:

Կարգի Կարգի 2 գլխի «Տեխնիկական հանձնաժողովի կազմավորումը և գործառույթները» բաժնի 6-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ջրամբարների, ՀՏԿ-ների նախագծման փորձ ունեցող, լիցենզավորված կազմակերպություններ, ընկերություններ»:

Կարգի VII գլխի 14-րդ կետի սկզբում ավելացնել հետևյալ բառերը.

«14. ՀՏԿ-ի զննումն իրականացրած աշխատանքային խումբը՝ զննման արդյունքները ձևակերպում է զննման ակտում /ձևը կցվում է/» այնուհետ՝ ինչպես տեքստում:

Կարգի VII գլխի 14-րդ կետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Զննման ակտը ներկայացվում է հանձնաժողովի քննարկմանն ու համաձայնեցմանը»:

Կարգի IV գլխի 18-րդ կետերը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«18. ՀՏԿ-ների համալիր ակնադիտական զննումը կատարվում է առնվազն 3 տարին մեկ անգամ, իսկ գործիքային հետազոտությունն ու զննումը, սկսած 2019թ.՝ 5 տարին մեկ անգամ»:

Կարգի IV գլխի 19-րդ կետի 2-րդ պարբերության նախադասության վերջում «շահագործող կազմակերպության» բառերից հետո ավելացնել՝ «կամ տեխնիկական հանձնաժողովի» արտահայտությունը:

Կարգի IV գլխի 23-րդ կետում՝ «ոչ ուշ, քան» բառերից հետո ավելացնել «պլանային» բառը:

Կարգի VI գլխի 39-րդ կետը սկսել հետևյալ բառերով.

«39. Տեղանքում տեղի ունեցած ուժեղ»:

«ՇՏԿ-ների անվտանգության հայտարարագրերի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» 31.07.2003թ. թիվ 957-Ն որոշման մասով.

Կարգի 2-րդ կետը սկսել հետևյալ բառերով.

«2. Այն ՇՏԿ-ների համար, որոնք իրենց բնութագրերով համապատասխանում են ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերի չափանիշներին, անկախ դրանց սեփականության ձևից, ներկայացվում են»:

Կարգի 7-րդ կետում, նախադասության վերջում ավելացնել հետևյալ բառերը. «զննումը՝ ՇՏԿ-ների զննման գործող կարգին համապատասխան, մինչև մեկ տարի առաջանցման ժամկետով»

Կարգի 10-րդ, 15-րդ, 21-րդ կետերում «3 տարին» բառերը փոխարինել «5 տարին» բառերով:

Կարգի 17-րդ կետը լրացնել հետևյալ բառերով.

«սեփականատիրոջ պատվերով, մինչև մեկ տարի առաջանցման ժամկետ ունեցող ՇՏԿ-ի հսկողության և զննման հաստատված ակտի առկայության պայմաններում»:

Կարգի 22-րդ կետում «տեսչական ստուգում», «ստուգման արդյունքների» դարձվածքները փոխարինել՝ «զննում», «զննման արդյունքների» դարձվածքներով:

Հանձնաժողովի անդամ Կ.Աղաբաբյանը առաջարկեց ՇՏԿ-ների զննման միջազգային փորձը կիրառել ՀՀ-ում և սահմանված կարգը համապատասխանեցնել միջազգային նորմերին:

Զեկուցող Դ.Ստեփանյանը պատասխանեց հնչեցրած հարցերին և առաջարկեց, որ հանձնաժողովի անդամներն իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնեն հանձնաժողովի աշխատակազմ:

Հանձնաժողովի նախագահ Հ. Թորմաջյանը, անդրադառնալով զեկույցին և ամփոփելով ելույթ ունեցողների կողմից արված առաջարկությունները, դիտողություններն ու առաջադրված հարցերը, հանդես եկավ հետևյալ առաջարկություններով.

1. Անհրաժեշտ է հստակեցնել, որ տեխնիկական հանձնաժողովը հիմնականում կոորդինացնում է զննման աշխատանքները՝ այլ ոչ թե զննումներ է կատարում:
2. Կարելի է քննարկել ՀՏԿ-ների անվտանգության որևէ խնդրի դեպքում տեսչական մարմինների կողմից անհապաղ ահազանգելու համար լիազորություն տալու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նպատակահարմարության հարցը:
3. Անհրաժեշտ է ևս մեկ անգամ փորձել կառավարություն ներկայացնել 17 խոշոր ջրամբարների անվտանգության հայտարարագրերի կազմման համար երեք կամ հինգ տարին մեկ անգամ համապատասխան ֆինանսական միջոցների անհրաժեշտության հարցը:
4. Անվտանգությանն առընչվող օրենսդրական բոլոր պահանջները պետք է վերաբերեն բոլոր ջրամբարներին՝ անկախ դրանց սեփականության ձևից:
5. Կարելի է քննարկել ՀՏԿ-ների ակնադիտական/վիզուալ/ զննումները երեք, իսկ գործիքային զննումները՝ հինգ տարին մեկ անգամ անցկացնելու մասին հարցը, ակնադիտական զննմամբ ՀՏԿ-ի անվտանգությանն սպառնացող թերություն հայտնաբերելու դեպքում անհապաղ գործիքային զննում իրականացնելու պայմանով:
6. Բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկել մինչև հոկտեմբերի 15-ը տեխնիկական հանձնաժողովի աշխատակազմ ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկությունները, այդ թվում նաև խմբագրական կարգի, որոնք կամփոփվեն և սահմանված կարգով կներկայացվեն Ջրային կոմիտե՝ ՀՀ կառավարություն ներկայացնելու համար:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց հանձնաժողովի անդամ Դ.Ստեփանյանը:

Ձեկուցող Դ.Ստեփանյանը տեղեկացրեց, որ Որոտանի հիդրոէլեկտրոկայանների համալիրի առք ու վաճառքի պայմանագրով ՀՏԿ-ների տեխնիկական վիճակի ուսումնասիրման պարտավորությունը դրա համար սահմանված ժամկետներում կատարելու համար դրված է «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի վրա, որի արդյունքում ՀՀ ԷԵԲՊ նախարարության և ՀԾԿ հանձնաժողովի հետ համատեղ պետք է մշակվի գործողությունների ծրագիր: «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն համապատասխան ուսումնասիրությունները պատվիրել է

«Ֆիխտներ» Գերմանական ընկերությանը, որը ուսումնասիրել և ներկայացրել է գործողությունների ծրագիր: «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի վրա այս պարտավորությունը դնելը ինքնանպատակ չի եղել: Քանի որ հարցը հիմնականում պետական հատուկ նշանակության ջրային համակարգերին է վերաբերում, ապա որոշվել է այն ներկայացնել տեխնիկական հանձնաժողովի քննարկմանը: Նպատակը՝ պատշաճ ձևով պարտավորության մշակումը, կատարումը և դրա վերաբերյալ հանձնաժողովի եզրակացություն ստանալն է:

Հանձնաժողովի նախագահ Հ. Թորմաջյանը առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ և հարցի քննարկումը կազմակերպել աշխատանքային՝ «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ և հնարավորության դեպքում՝ նաև «Ֆիխտներ» ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ: Առաջարկվեց աշխատանքային խմբի կազմում ընդգրկել Մարգարյան Ալբերտ՝ տեխնիկական հանձնաժողովի անդամ տ.գ.դ., պրաֆեսոր, Նուրիջանյան Սարգիս՝ տ.գ.դ., պրաֆեսոր, Անդրեասյան Ռուբիկ՝ տեխնիկական հանձնաժողովի անդամ, Ստեփանյան Դանիել՝ տեխնիկական հանձնաժողովի անդամ:

Աշխատանքային խմբի աշխատանքների կազմակերպման և եզրակացություն ներկայացնելու համար հայտարարվեց ընդմիջում մինչև 17.10.2018թ.:

2018թ. հոկտեմբերի 16-ին «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ գրասենյակում կայացած աշխատանքային քննարկման ընթացքում հնարավորություն քննարկել «FICHTNER» ընկերության կողմից իրականացված «Որոտան ՀԷԿ-երի կասկադի պատվարների անվտանգության և կառուցվածքների գնահատում» -ն ու ավարտական հաշվետվությունները, նրանց կողմից ներկայացված կոնցեպցիաները՝ ՀՏԿ-ների անվտանգության ապահովման միջոցառումների մշակման առումով:

Նյութերի ուսումնասիրման ընթացքում հնչեցրած հարցերի ու պատասխանների, մտքերի ու կարծիքների փոխանակման արդյունքներով, աշխատանքային խմբի եզրակացությունը հետևյալն է .

1. Կապալառուի կողմից կատարվել է Կասկադի ՀՏԿ-ների առկա վիճակի մեծ ծավալի, բազմակողմանի, մանրակրկիտ ուսումնասիրություններ: Համադրվել են նախագծային և փաստացի բնութագրերը, վեր են հանվել դրանց շեղումները:

2. Կատարված է մեծ ծավալի բնօրինակ հետազոտման, նմուշառման և լաբորատոր փորձարկումների աշխատանքներ՝ նպատակ ունենալով հավաքագրել ու ապահովել ՀՏԿ-ների գնահատման համար պահանջվող ելակետային տվյալների հնարավոր ամբողջական կազմը:
3. Տրվել են ՀՏԿ-ների վիճակի վեր գնահատականներ և հիմնավորող հաշվարկներ: Ստացված արդյունքները համադրվել են սահմանային, թույլատրելի շեմերի հետ, վեր են հանվել շեղումները: Տրված են դրանց լուծման նախնական մոտեցումները:
4. Առանձին ուսումնասիրման և հաշվարկման խնդիր են դիտարկվել սեյսմիկային ու վարարաջրերին վերաբերող հիմնախնդիրները: Գնահատվել է ՀՏԿ-ների ներկա վիճակի համապատասխանությունը՝ դրանց պահանջներին: Ստացված արդյունքներով առաջարկվել է անհրաժեշտ միջոցառումների կազմը:
5. Գնահատվել են ռիսկերը, առաջարկվել են դրանց հնարավոր նվազեցման ուղիները: Կարևորվել է պատվարների արտակարգ իրավիճակների կառավարման պլանների ու շահագործման կանոնների մշակման պարտադիր լինելու անհրաժեշտությունը:

Աշխատանքային խումբը ունի հետևյալ առաջարկությունները.

- Խնդրահարույց է դառնում ՀՀ-ում գործող նորմատիվ ակտերով սահմանված չափորոշիչների և կապալառուի կողմից կիրառված միջազգային նորմերի չափորոշիչների հիման վրա ստացված արդյունքների գնահատման հարցը, քանի որ կապված դրանց մեծությունից փոխվում է պահանջվող իրականացվելիք միջոցառումների գնահատականը /ծավալը-գումարը/: Այս հարցի պատասխանը պահանջում է իրավասու ու շահագրգիռ կողմերի քննարկում ու դիրքորոշման հստակեցում:
- Առաջարկվում են լրացուցիչ ուսումնասիրությունների ծրագրերում ներառել Սպանդարյան ՀԷԿ-ի արագահոսի հիդրավլիկ ռեժիմի ջրահոսքի աէրացման երևույթի գնահատումը:
- Անհրաժեշտ է հստակեցնել պատվարների միջուկի, պրիզմաների, ֆիլտրերի նյութերի խորքային ուսումնասիրության անհրաժեշտության հարցը՝ հաշվետվություն էջ՝ 29-ում գրունտների հեղուկացման խնդիրը բացառելու կամ պնդելու առումով:
- Սպանդարյան ՀԷԿ-ի հաշվարկային հզորության հաշվարկներում կիրառված թունելի երեսարկման խորդուբորդության գործակցի հաշվարկային և փաստացիի տարբերության, ինչպես նաև թունելի շուրջ 400մ երկարության վրա կենդանի կտրվածքի փոքրացմամբ

պայմանավորված, ելքերի նվազեցված լինելու խնդրի կարևորությամբ պայմանավորված, առաջարկվում է այս խնդիրը դարձնել լրացուցիչ ուսումնասիրման առարկա:

- > Մոնիտորինգի համակարգերի ներդրաման ու լրացուցիչ ստացված տվյալների արդյունքներով ճշգրտված հաշվարկային մոդելների կիրառմամբ ՀՏԿ-ների գնահատման նոր արդյունքներն ու առաջարկող միջոցառումները, առաջարկվում է դարձնել տեխնիկական հանձնաժողովի քննարկման առարկա:

Ամփոփելով օրակարգի հարցերի վերաբերյալ քննարկումները և կատարելով ելույթների արդյունքներից բխող եզրահանգումներ, հաշվի առնելով «Քոնթուր Գզլորբալ Հիդրո Կասկադ» Ընկերության ուսումնասիրությունների վերաբերյալ տեխնիկական հանձնաժողովի կողմից ստեղծված աշխատանքային խմբի եզրակացությունը, հանձնաժողովը միաձայն

ո Ր Ո Չ Ե Գ.

1. ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը սահմանելու մասին» N686-Ն և 2003 թվականի հուլիսի 31-ի՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N957-Ն որոշումներում առաջարկել կատարելու վերը շարադրված փոփոխությունները և լրացումները:
2. «Քոնթուր Գզլորբալ Հիդրո Կասկադ» Ընկերության պատվերով «FICHTNER» կազմակերպության կողմից կատարված ուսումնասիրությունները ընդունել ի գիտություն՝ տալով դրական եզրակացություն:

Տեխնիկական հանձնաժողովի նախագահ,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



Հովհաննես Թոքմաջյան

17 հոկտեմբերի 2018թ.

քաղ. Երևան